«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«18» 09 2014թ.

Հաստատում եմ

Գնումների աջակցման կենտրոնի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

_____ Հ. Թունյան

Ն ԳԲԽ-11/14 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ու Թ Յ Ու Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. Ն 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 02.04.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Խաչպար» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը.

«ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-14/19» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը 19.03.2014թ. կայացած նիստում (արձանագրություն թիվ 3) որոշել է մերժել «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը բոլոր չափաբաժիններով՝ գնային առաջարկների կազմման անհամապատասխանության պատճառով (կետ թիվ 1)՝ չներկայացնելով ոչ մի գրավոր հիմք, փաստ կամ փաստաթուղթ:

Ընկերությունը համաձայն չէ գնահատող հանձնաժողովի որոշման հետ, քանի որ գտնում է, որ «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-14/19» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի դրույթների խախտումներ, կատարել է լիազոր մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևաթղթի (գնային առաջարկի) կամայական փոփոխություններ, որոնցով սահմանել է այնպիսի չափանիշներ, որոնք անհիմն կերպով բարդացրել են գնման գործընթացին միասնական կանոններով «Խաչպար» ՍՊԸ-ի մասնակցությունը, որի հետևանքով վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկը չի ընդունվել հանձնաժողովի կողմից:

Ընկերության պնդմամբ «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-14/19» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի հետևյալ դրույթները՝

1. Հոդված 3, կետ 2, ենթակետ 1՝ «...գնման գործընթացի միասնական կանոններով...կազմակերպում»,

2. Հոդված 4, կետ 5, ենթակետ 1՝ «...Լիազորված մարմինը հաստատում է՝ գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի...օրինակելի ձևերը...»,

3. Հոդված 5, կետ, ենթակետ 2՝ «Չեն կարող սահմանվել...այնպիսի չափանիշներ, որոնք՝...անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին»:

Բողոքը հիմնավորելու համար Ընկերությունը ներկայացրել է լիազոր մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևաթղթի (գնային առաջարկի), այլ ԲԿ-ների կողմից կազմված նույն ձևաթղթերի օրինակները, ինչպես նաև «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-14/19» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի կողմից կազմված գնային առաջարկի ձևաթուղթը՝ համեմատություն կատարելու համար:

Ընկերության պնդմամբ, «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-14/19» ձևաթղթի վերջին երկու սյունակներում՝ «Առաջարկված գինը (թվերով)» և «Առաջարկված գինը (տառերով)», հանձնաժողովի կողմից կամայականորեն ավելացվել է «Ընդհանուր» բառը, որին

համապատասխան Ընկերությունը լրացրել է սյունակները, իսկ այդ նույն «Ընդհանուր» բառը չի ավելացվել «Արժեք» սյունակում, ինչը տարընմբռնման հիմք է հանդիսացել:

Ընկերությունը նշել է նաև, որ «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-14/19» ձևաթղթում ընդհանրապես հանված է սյունակների համարակալած շարքը, որի վերջին երկու սյունակներում գրված է լինում թվերը հաշվելու ֆորմուլան (5=3+4), որի առկայության դեպքում վերջինս «Արժեք» սյունակում կգրեր «Ընդհանուր»-ի սյունակում գրված թվերը:

Բողոքը քննող հանձնաժողովին «Խաչպար» ՍՊԸ-ն խնդրել է բեկանել «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-14/19» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի 19.03.2014թ. կայացած նիստի թիվ 1 կետի՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը բոլոր չափաբաժիններով մերժելու մասին որոշումը, և հանձնարարել «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-14/19» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովին տվյալ չափաբաժիններում կատարել հաղթող մասնակիցների որոշման նոր գործընթաց:

2. «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 04.04.2014թ. N 011/032-029 գրությամբ դիմել է «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 02.04.2014թ. «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ն 08.04.2014թ. N 08-102 գրությամբ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների համաձայն, պատվիրատուները շրջանակային համաձայնագրերով գնումներ կազմակերպելիս հիմնվում են գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու հրավերների վրա: Լիազոր մարմինը հաստատում է գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը: Այս նշված երկու իրավական ակտերը մեկը մյուսին չեն հատվում, ինչպես նաև չեն հակասում: «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-14/19» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը հաստատելիս գնահատող հանձնաժողովը հիմք է ընդունել գնումների պաշտոնական տեղեկագրում «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով

հրապարակված հրավերի բոլոր դրույթները, բացառությամբ գնային առաջարկի օրինակելի ձևի, որում ներառված չէ ՀՀ կառավարության 10.02.2011 թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի փոփոխությամբ հաստատված նոր ձևը: ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի օգոստոսի 2-ի «Գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 667-Ա հրամանի 2-րդ կետի համաձայն պատվիրատուները կարող են կատարել փոփոխություններ կիրառվող փաստաթղթերի օրինակելի ձևերում, որոնք չեն կարող հակասել «Գնումների մասին» ՀՀ օրենքի նպատակներին և սկզբունքներին: Հետևաբար, «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-14/19» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը կազմելիս և հաստատելիս պատվիրատուն հիմք է ընդունել օրեսդրությամբ սահմանված դրույթները և թույլ չի տվել որևէ խախտում:

Ինչ վերաբերվում է գնային առաջարկում կիրառված «Ընդհանուր» բառին, ապա պատվիրատուի կածիքով դա չի կարող հանդիսանալ տարաբնույթ մեկնաբանությունների հիմք կամ «Գնումների մասին» ՀՀ օրենքի որևէ հոդվածի խախտում, քանի որ Կարգի 56-րդ կետով հստակ սահմանված է հետևյալը. եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով:

Պատվիրատուն պարզապես գնային առաջարկում ներառել է Կարգում կիրառված բառը, դրանով իսկ ավելի հասկանալի դարձնելով հրավերի պահանջները: Բացի այդ, գնային առաջարկում նշված է նաև հետևյալը. «Ուսումնասիրել Ձեր կողմից տրամադրված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-14/19» ծածկագրով ընթացակարգի ծանուցումը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը առաջարկում է պայմանագիրը ըստ չափաբաժինների կատարել հետևյալ գներով»:

Օրենսդրության պահանջների համաձայն՝ գնային առաջարկի հաշվարկը ստուգվում և գնահատվում է հանձնաժողովի կողմից: Ներկայացվող հաշվարկը /գնային առաջարկի բաղադրիչների թվաբանական գումարը/ պետք է համապատասխանի մասնակցի առաջարկած գնին՝ տառերով արտահայտված, հակառակ դեպքում մասնակցի հայտը ենթակա է մերժման: Դրա համար հիմք է հանդիսանում նաև լիազոր մարմնի կողմից 28.03.2013 թվականի թիվ 1.1/13.1/4089-13 գրությամբ տրված պաշտոնական պարզաբանումը, մասնավորապես դրա 2-րդ կետը: Միաժամանակ,

պատվիրատուն նշել է, որ տարաբնույթ հասկանալու դեպքում մասնակիցը կարող էր պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում, որը չի կատարել:

Պատվիրատուն գտնում է, որ մասնակցի կողմից սխալ գնային առաջարկ ներկայացնելու հիմք է հանդիսացել ոչ թե հրավերի տարաբնույթ մեկնաբանությունը, այլ օրենսդրության թերի իմացությունը:

Պատվիրատուի պնդմամբ, «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-14/19» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի շրջանակներում բոլոր որոշումները կայացվել են ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների լիովին պահպանմամբ և բողոքի առարկան չի համապատասխանում իրականությանը:

3. ԳԲԽ-11/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-11/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումները.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ նաև Կենտրոն) ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Բողոքաբեր ընկերություն) կողմից 02.04.2014թ. ներկայացված բողոքը, «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-14/19» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), N «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-14/19» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 19.03.2014թ. ժամը 14:30-ին կայացած նիստի N 3 արձանագրությունը, «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից (այսուհետ՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին հասցեագրված 08.04.2014թ. N 08-102 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով կազմակեպվել է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-14/19» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Հանձնաժողովի 19.03.2014թ. ժամը 14:30-ին կայացած նիստի N 3 արձանագրության համաձայն՝ «Խաչպար» ՍՊԸ-ի գնային առաջարկները բոլոր

չափաբաժինների մասով մերժվել են՝ գնային առաջարկների կազմման անհամապատասխանության հիմքով:

«Խաչպար» ՍՊԸ-ն 02.04.2014թ. Կենտրոնին ներկայացված բողոքով հայտնել է, որ Հանձնաժողովը 19.03.2014թ. կայացած նիստում (արձանագրություն թիվ 3) որոշել է մերժել «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը բոլոր չափաբաժիններով՝ գնային առաջարկների կազմման անհամապատասխանության պատճառով՝ չներկայացնելով ոչ մի գրավոր հիմք, փաստ կամ փաստաթուղթ:

«Խաչպար» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ Հանձնաժողովի կողից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետը, 4-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին ենթակետը և 5-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետը:

Բողոքաբեր ընկերությունը բողոքը քննող հանձնաժողովին խնդրել է բեկանել «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-14/19» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի 19.03.2014թ. կայացած նիստի թիվ 1 կետով՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը բոլոր չափաբաժիններով մերժելու մասին որոշումը, և հանձնարարել «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-14/19» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովին տվյալ չափաբաժիններում կատարել հաղթող մասնակիցների որոշման նոր գործընթաց:

Ընթացակարգի հրավերին (ծանուցմանը) կից ներկայացված գնային առաջարկով սահմանվել է, որ հայտերն անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ ձևով՝ ապրանքի անվանումը, ինքնարժեքի հաշվարկ՝ արժեք, ԱԱՀ, ընդհանուր առաջարկված գինը՝ տառերով և թվերով:

«Խաչպար» ՍՊԸ-ի Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացված գնային առաջարկում նշվել է, որ «Խաչպար» ՍՊԸ-ն ուսումնասիրելով պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն գնային առաջարկով նշված գների, որտեղ գնման ենթակա ապրանքի՝ «արժեքը» սյունակում գնման ենթակա ապրանքների գները ներկայացված են միավորի հաշվարկով, իսկ «ընդհանուր առաջարկված գինը տառերով և թվերով» սյունակում՝ ընդհանուր գնի հաշվարկով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին

համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնման գործընթացի կազմակերպման» մասին կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)՝

- 48-րդ կետի համաձայն՝ մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:
- 49-րդ կետի համաձայն՝ եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա մասնակցի ներկայացրած գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի չափը: Ընդ որում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից կնքված համաձայնագրերով (պայմանագրերով) նախատեսված դեպքերի մասնակցի (մասնակիցների) գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:
- 56-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով: Պայմանագրի գինը կայուն է, եթե պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են պայմանագրի կնքման օրվանից հաշված մինչև մեկ, իսկ ապրանքները մատակարարվում և ծառայությունները մատուցվում են մինչև երեք տարվա ընթացքում:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետի 06.06.2011թ. թիվ 150-Լ հրամանով հաստատված «Բժշկական սարքավորումների և գործիքների ձեռքբերման նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի» հրավերի 2-րդ մասի «Գրանցման և պատվիրատուին ներկայացվող հատերը պատրաստելու» Հրահանգի 3.3 կետի համաձայն՝ եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա մասնակցի ներկայացրած գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի

հարկի գումարի չափը: Ընդ որում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից կնքված համաձայնագրերով (պայմանագրերով) նախատեսված դեպքերի մասնակցի (մասնակիցների) գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

Գտնում ենք, որ Հանձնաժողովը՝ բողոքաբեր ընկերության գնային առաջարկը՝ գնային առաջարկների կազմման անհամապատասխանության հիմնավորմամբ մերժելով գործել է իրավաչափ, քանի որ բողոքաբեր ընկերության կողմից գնային առաջարկում գնման ենթակա ապրանքի՝ «արժեքը» սյունակում գնման ենթակա ապրանքների գները ներկայացված են միավորի հաշվարկով:

Բացի այդ, Ընթացակարգի մասնակցի (մասնակիցների) գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման, իսկ բողոքաբեր ընկերության կողմից գնային առաջարկում գնման ենթակա ապրանքի՝ «արժեքը» սյունակում գնման ենթակա ապրանքների գները միավորի հաշվարկով ներկայացված լինելու պատճառով Հանձնաժողովը զրկվել է վերջինիս գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացնելու հնարավորությունից:

Ինչ վերաբերում է Բողոքաբեր ընկերության այն պնդմանը, որ «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-14/19» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերին կից ներկայացված գնային առաջարկի ձևաթղթում վերջին սյունակներում՝ «Առաջարկված գինը» (թվերով) և «Առաջարկված գինը» (տառերով) բառերից առաջ Պատվիրատուի կողմից ավելացվել է «Ընդհանուր» բառը, ինչը Բողոքաբեր ընկերության համար տարընմբռնման հիմք է հանդիսացել, անհիմն է, քանի որ նշված հավելվածում գնման ենթակա առարկաների արժեքների գները՝ միավորի գնի հաշվարկով ներկայացնելու վերաբերյալ որևէ սահմանում առկա չէ:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 16.04.2014թ. ժամը 16:00-ին կայացած բողոքը քննող հանձնաժողովի նիստի ընթացքում Բողոքաբեր ընկերության ներկայացուցիչը միջնորդեց բողոքում կատարել որոշակի փոփոխություններ, մասնավորապես. ««ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-14/19» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի դրույթների խախտումներ,

կատարել է լիազոր մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևաթղթի (գնային առաջարկի) կամայական փոփոխություններ...» նախադասությունից հանել «կամայական» բառը:

Բողոքաբեր ընկերության ներկայացուցիչը խնդրեց նաև, որպես բողոքի իրավական հիմք, ավելացնել Կարգի 110-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությունը, որի համաձայն՝ հայտերի բացման նիստում, որը պետք է համընկնի հրավերով սահմանված հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին, գնումները համակարգողը տեղեկատվություն է հաղորդում հայտերի գրանցամատյանում կատարված գրառումների մասին, որից հետո հանձնաժողովը՝ հրապարակում է բացված հայտերով ներկայացված գները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը, ինչը Հանձնաժողովի կողմից չի պահպանվել:

Բողոքը քննող հանձնաժողովի այն հարցին, թե արդյոք Բողոքաբեր ընկերությունը կարող է ներկայացնել որևէ ապացույց, որ Հանձնաժողովի կողմից չեն պահպանվել Կարգի 110-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված պահանջները, բողոքաբեր ընկերությունը հայտնեց, որ մատնանշված իրավական հիմքում ընկած է այն հանգամանքը, որ Հանձնաժողովը հրապարակել է բացված հայտերով ներկայացված գները, սակայն հիմք չի ընդունել տառերով գրվածը:

Գտնում ենք, որ Հանձնաժողովի կողմից պահպանվել են Կարգի 110-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված պահանջները, քանի որ Հանձնաժողովի կողմից բացված հայտերով ներկայացված գները հրապարակելու ժամանակ թվերով և տառերով գրված գումարների միջև անհամապատասխանությունների առկայության դեպքում միայն Հանձնաժողովը պետք է հիմք ընդունի տառերով գրվածը, իսկ Բողոքաբեր ընկերության կողմից առաջարկված թվերով և տառերով արտահայտված գումարների միջև անհամապատասխանություններ առկա չեն:

Հիմք ընդունելով վերոգրյալը գտնում ենք, որ «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-14/19» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի 19.03.2014թ. կայացած նիստի N 3 արձանագրության թիվ 1 կետով՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը բոլոր չափաբաժինների մասով մերժելու մասին որոշումը բեկանելու և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի Ընկերության կողմից ներկայացված չափաբաժինների մասով հաղթող մասնակիցների որոշման նոր գործընթաց

հանձնարարելու պահանջների մասին «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 02.04.2014թ. Կենտրոնին ներկայացված բողոքն անհիմն է և առաջարկում ենք մերժել այն:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ Է. Սարգսյան

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-11/14 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար Լ. Եղիազարյան